ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

"26" "հունիսի" "2013թ. ԹՊ - 13/41

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց
էթիկայի հանձնաժողովի նախագահ
պարոն Էմիլ Բաբայանին

ք. Երևան, Բաղրամյան - 26

Հարգելի պարոն Բաբայան,

Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի գույքի ու եկամուտների և դրանց ձեռքբերման աղբյուրի օրինականության վերաբերյալ կասկածները և մամուլում մինչ օրս շրջանառվող տարաբնույթ մեկնաբանությունները սկիզբ առան պարոն Մարգարյանի կողմից իր գույքի և եկամուտների հայտարարագիրը (2012թ. մարտի 1-ից մինչև 2013թ. մարտի 1-ն ընկած ժամանակահատվածի համար) որպես Երևանի ավագանու թեկնածու ԿԸՀ ներկայացնելուց հետո[1]: Մինչդեռ, ըստ ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով ներկայացրած 2011թ. և 2012թ. գույքի և եկամուտների հայտարարագրի Տ.Մարգարյանը, որպես սեփականություն, չունի որևէ շարժական կամ անշարժ գույք կամ եկամտի այլ աղբյուր՝ աշխատավարձից բացի: Համադրելով Տ.Մարգարյանի՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով ներկայացրած և պաշտոնապես հրապարակված հայտարարագրերը ԿԸՀ ներկայացրած հայտարարագրի հետ՝ ստեղծվում է տպավորություն, որ այդ ողջ շարժական և անշարժ գույքը ձեռք է բերվել 2013թ. հունվար-փետրվար ամիսներին:

Ի լրումն վերոնշյալի՝ վերջին օրերին, կապված ներքաղաքային տրանսպորտի ուղեվարձի բարձրացման հետ, առավել հաճախացել են հրապարակումները քաղաքապետի բիզնես-գործունեության, մասնավորապես, այն մասին, որ որոշ երթուղիներ սպասարկող կազմակերպություններ պատկանում են Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին և նրա մերձավոր ազգականներին:

«Հանրային ծառայության մասին» օրենքը սահմանում է հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնները, այդ թվում՝ *«ձգտել կառավարել իր ներդրումներն այնպես, որ հնարավորինս նվազագույնի հասցվեն շահերի բախման իրավիճակները» (հոդված 28, մաս 3, կետ 7):* Թեև այս ձևակերպմամբ օրենսդրությունը նպատակ է ոչ թե շահերի բախումը ընդհանրապես բացառելու, այլ ընդամենը՝ նվազագույնի հասցնելուն, այդուհանդերձ նորմն ունի կանխարգելիչ բնույթ: Նույն օրենքի 31-րդ հոդվածի պահանջն այն է, որ շահերի բախում առաջանալու դեպքում բարձրաստիճան պաշտոնատար անձը, պարտավոր է իր վերադաս անձին գրավոր տեղեկացնել շահերի բախման վերաբերյալ հայտարարություն՝ ներկայացնելով շահերի բախմանը վերաբերող կոնկրետ հանգամանքները: Բացի այդ բարձրաստիճան պաշտոնատար անձն իրավունք ունի բարձրաստիճան

---

[1] http://hetq.am/arm/news/25453/erevani-yntrutyunner-arajin-demqeri-unecvatsqy.html կամ http://www.ilur.am/news/view/12713.html

Հայաստան, Երևան 0025, Այգեստանի 9 փող. տուն 6
Հեռ.՝ (374 10) 569910, (37410) 553069 • Ֆաքս՝ (374 10) 571399
info@transparency.am • www.transparency.am

պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովից ստանալու պարզաբանում կոնկրետ իրավիճակում շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալու անհրաժեշտության մասին: Տվյալ դեպքում, եթե Տ.Մարգարյանը կամ իր մերձավոր ազգականները հանդիսանում են երթուղիներ սպասարկող կազմակերպությունների սեփականատերեր, ապա նա, որպես Երևանի քաղաքապետ, օժտված լինելով փոխադրավարձի չափը սահմանելու օրենքով նախատեսված լիազորությամբ, կարող է գտնվել (կամ գտնվել է) շահերի բախման իրավիճակում:

Մամուլում շրջանառվող հրապարակումները այս կամ այն բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ տվյալ դեպքում Երևանի քաղաքապետի գույքի և եկամուտների վերաբերյալ շարունակում են մնալ հանրության ուշադրության կենտրոնում և տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տալ նաև այն պատճառով, որ պաշտոնյայի կողմից որևէ հերքում չի հնչել, ինչպես նաև որևէ պետական մարմնի, այդ թվում՝ ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի պաշտոնական դիրքորոշումը դրանց վերաբերյալ չի հրապարակվել:

Համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 43-րդ հոդվածի՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործառույթներից է հայտարարագրերի վերլուծությունը և հրապարակումը, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախման բացահայտումը: Նույն օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ էթիկայի հանձնաժողովը վարույթ հարուցում է սեփական նախաձեռնությամբ:

Ելնելով վերոգրյալից և դիմելով Ձեզ՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկատվությունը՝

1. Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են արդյո՞ք ԶԼՄ-ներում հրապարակված տեղեկությունները Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի գույքի և եկամտի աղբյուրների վերաբերյալ, վերլուծվել և համադրվել են արդյո՞ք նրա և նրան փոխկապակցված անձանց հայտարարագրերը մամուլում շրջանառվող տեղեկությունների հետ.
2. Համադրվել են արդյո՞ք Տարոն Մարգարյանի ԲՊԱ էթիկայի հանձնաժողով ներկայացրած գույքի և եկամտի հայտարարագրերը ԿԸՀ ներկայացրած հայտարարագրի հետ, ինչ հետևություններ են արվել.
3. Ուսումնասիրե՞լ եք, արդյոք, մամուլում տեղ գտած վերը նշված հրապարակումները, և եթե այո, դիտարկվել են արդյո՞ք դրանցից բխող շահերի բախման վերաբերյալ հնարավոր կասկածները: Արդյո՞ք չեն օգտագործվել պաշտոնեական դիրքը և լիազորությունները՝ առաջացնելով շահերի բախման ռիսկ, և եթե այո, «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ դիմել է արդյո՞ք Տ.Մարգարյանը բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին՝ կոնկրետ իրավիճակում շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալու անհրաժեշտության մասին պարզաբանում ստանալու նպատակով:

Եթե վերոնշյալ հարցադրումների վերաբերյալ հարուցվել է վարույթ և եղել են ուսումնասիրություններ, խնդրում ենք տրամադրել դրանց արդյունքները, իսկ եթե ոչ՝ ապա հիմք ընդունել սույն դիմումը, Ձեր լիազորությունների շրջանակում պարզել մամուլի հրապարակումներում նշված փաստերի համապատասխանությունը իրականությանը և համապատասխան հիմքերի առկայության դեպքում «Հանրային ծառայության մասին» ՀՀ

Հայաստան, Երևան 0025, Այգեստանի 9 փող. տուն 6
Հեռ.՝ (374 10) 569910, (37410) 553069 • Ֆաքս՝ (374 10) 571399
info@transparency.am • www.transparency.am

օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հարուցել վարույթ պարզելու՝

- ներքաղաքային փոխադրավարձը բարձրացնելիս քաղաքապետը գտնվել է արդյո՞ք շահերի բախման իրավիճակում կամ եղել է նման ռիսկ,
- ներդրումները կառավարելիս քաղաքապետի կողմից չեն օգտագործվել արդյո՞ք պաշտոնեական դիրքը և լիազորությունները:

Գույքի և եկամուտների աղբյուրների օրինականության վերաբերյալ կասկածներ առաջանալու դեպքում, հուսով ենք, օրենքով սահմանված կարգով կդիմեք իրավապահ մարմիններին:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքներով՝
Գործադիր տնօրեն Վարուժան Հոկտանյան

Կազմեց՝
Հ. Տիգրանյան

Հայաստան, Երևան 0025, Այգեստանի 9 փող. տուն 6
Հեռ.՝ (374 10) 569910, (37410) 553069 • Ֆաքս՝ (374 10) 571399
info@transparency.am • www.transparency.am